

Հաստատված է

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի

2010թ. սեպտեմբերի 24-ի նիստում

Գիտ. խորհրդի նախագահ

Ա. Ա. Առաքելյան

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒԹ Յ ՈՒ Ն

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՎԱԾՆԻ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՅՈՒՄ «ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ» ՀԱՆԴԵՍԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի «Գիտական հոդվածների ժողովածու» հանդեսի խմբագրության /այսուհետև Խմբագրություն/ հիմնադիրն է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ՊՈԱԿ /այսուհետև Հիմնադիր/:
- 1.2. Խմբագրության հասցեն է՝
ք. Իջևան, Ուսանողական 3, հեռ. 4-00-50; 3-65-97
- 1.3. Խմբագրությունը իրավաբանական անձ չէ և գործում է Հիմնադիրի կողմից հաստատաված կանոնադրության հիման վրա:
- 1.4. Հանդեսը իրատարակվում է պարբերաբար հայերեն, իսկ առանձին նյութերով օտար լեզուներով /ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն/:
- 1.5. Հանդեսը կարող է ունենալ նաև նույնանուն և նույն ծավալի հավելվածներ:

2. Կազմակերպական կառուցվածքը

- 2.1. Հիմնադիր, գլխավոր խմբագրի, խմբագրության խորհրդի դրամական, գույքային և տնտեսական հարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրերով, որոնք չպետք է հակասեն ՀՀ գործող օրենսդրությանը:
- 2.2. Խմբագրության աշխատանքները ղեկավարում է Հիմնադիրի կողմից նշանակված գլխավոր խմբագիրը, որը իրականացնում է Հիմնադիրի ծրագրերը՝ մասնագիտական ինքնուրույնության հիման վրա:
- 2.3. Գլխավոր խմբագիրը իրականացնում է Հանդեսի ընդհանուր ղեկավարությունը և կազմակերպում է ընթացիկ աշխատանքները: Նա պատասխանատու է աշխատանքի արդյունքի, կանոնադրական պահանջների կատարման համար:
- 2.4. **Գլխավոր խմբագիրը իրավունք ունի՝**
ա/ հանդեսգալ խմբագրության անունից կառավարման և դատական մարմիններուն,

- բ/ հողվածագրի համաձայնության խմբագրել նրա կողմից ներկայացված նյութերն ու տեղեկությունները,
- գ/ իրավիրել խմբագրության խորհուրդ և նախագահել խորհուրդների նիստերում,
- ե/ կայացնել որոշումներ խմբագրության գործունեության ընթացիկ հարցերի վերաբերյալ,
- զ/ խմբագրության անունից վարել բանակցություններ և ստորագրել հանդեսի խմբագրական խորհուրդի կողմից ընդունված փաստաթոթերը:

2.5. Գլխավոր խմբագիրը պարտավոր է՝

- ա/ հսկողություն իրականացնել խմբագրության արդյունավետ գործունեության նկատմամբ,
- բ/ պատասխանատվություն կրել խմբագրության նյութերի հավաստիության «Մամուխի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսնված պահանջների կատարման համար,
- գ/ չիրապարակել պետական գաղտնի տեղեկություններ, պատերազմ, բռնություն, ազգային և կրոնական թշնամանք կրող, ինչպես նաև կեղծ և չստորագրված նյութեր,
- դ/ պահպանել «ՀՀ հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ գործող օրենսդրությանը սահմանված պահանջները,
- ե/ հոգ տանել մայրենի լեզվի անաղարտության համար
2. 6. Հանդեսի յուրաքանչյուր համարը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները. իրատարկության ավանումը, հիմնադիրը, խմբագիրը, իրատարակիչը, տպաքանակը, տպարանի հասցեն

3. Հիմնական պարտականություններն ու խնդիրները

Որպես գիտական և ուսումնամեթոդական հանդես այն իր էջերում իրապարակելու է կյանքի և գիտության բոլոր բնագավառների իրավական կարգավորմանը, գործող օրենքների էռությանը, նպատակներին ու խնդիրներին վերաբերվող նյութեր, գիտական հոդվածներ, ուսումնա-մեթոդական և գիտամանկավարժական հետազոտություններ:

4. Հիմնադրի իրավունքներն ու պարտականույունները

- 4.1. Հանդեսի գործունեությունը ապահովելու նպատակով հիմնադիրը խմբագրությանն ապահովում է աշխատապայմաններով, գույքով, թղթով, տեխնիկայով և այլ անհրաժեշտ միջոցներով:
4. 2. Հիմնադիրը կարող է դադարեցնել կամ լուծարել խմբագրության գործունեությունը սույն կանոնադրական պահանջները խախատելու դեպքում:

4. 3.՝ Հիմնադիրը՝

- նշանակում և ազատում է հանդեսի գլխավոր խմբագրին և պատասխանառությունը պարտուղարին,
- կասեցնում և դադարեցնում է խմբագրության գործունեությունը,
- տնօրինում է խմբագրության ֆինանսական միջոցներն ու գույքը,
- իրականացնում է խորհրդատվական գործունեություն:

5. Խմբագրության ֆինանսական միջոցների գոյացման և օգտագործման կարգը

5. 1. Խմբագրության ֆինանսական միջոցները գոյանում են՝

- հիմնադրի կողմից կատարած մասնահանումներից,
- ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից տրված նվիրատվություններից,
- ՀՀ օրենսդրությանն չարգելված այլ աղբյուրներից:

5.2. Խմբագրության ֆինանսական միջոցները և գույքը համարվում է հիմնադրի սեփականություն և տնօրինվում է նրա կողմից:

5.3. Խմբագրության գույքի փչացման կամ կորստի դեպքում ֆինանսական պատասխանատվությունը կրում է այն անձիք, որոնց օգտագործմանը հանձնվել է այդ գույքը: